

ինքն՝ ուղղել թղթով զբանսն, զմի ՚ի հրաշագոյն գրուածոց իւրոց եւ համօրէն անձնական ջատագովութեանց. գորոյ գորպիսութեամբ զանց արարեալ ՚ի տեղուոջս, միայն զպատշաճն պատմութեանս յուշ արասցուք. զի ցուցանէ՝ ոչ ինքնահամարձակ ինչ արարեալ յայնմ ժողովի, այլ համաձայնեալ արարելոցն ՚ի նմին Լեւոնէ կամ Լեւոնիւ. ուր՝ յիշէ ընդ աղօս՝ եւ այլ ինչ գործս արարեալ Լեւոնի՝ ՚ի նոյն դէպս կալանաց տղայ կաթողիկոսին, զվեռանել ոմանց ՚ի Հռոմկլայն՝ յեռօրեայ հակառակութեանն եղելոյ ընդ բերդացիս եւ ընդ արտաքինսն, եւ Լեւոնի պահանջել եւ առնուլ տուգանս, նաեւ յայնոցիկ կամ վասն այնոցիկ՝ որ ազգականք էին Ներսիսի, եւ սմա անկ էր ժառանգութիւնն⁵⁰. «Բայց իբրեւ Աստուծոյ հրամանին, (ասէ), իշխանութեանդ հնազանդեցաք, եւ հաւատացաք Աստուծոյ տալ քեզ իմաստ առ ՚ի նոյն, զիտել զթերութիւն անձին. գոր եւ աղօթեցաք, եւ առաք զպտուղ աղօթիցն, ըստ որում եւ ետդ բարեսէր»: Բայց ոչ ՚ի սպառ կարճէ եւ զյանդիմանութիւնն. «Ճշմարտութիւնս մեր, գոր դու աչօք ես տեսեալ եւ վայելեալ, վասն նոցին զրպարտելոյն՝ երգիծանէ՛մ... Հեռի արասցէ Աստուած ՚ի քէն զՊիղատոսի դատողութեանն ճանապարհ:... Թէ քո աստուածպաշտութիւնդ արժանացոյց զնոսա պատասխանոյ, մեր իմաստութիւնս՝ ոչ բնաւ. զի իւրատիմք՝ ոչ տալ անզգամին պատասխանի». եւ այլն: Ճշմարտութեան՝ քան անձին ջատագով, ոչ պատկառէր Ներսէս՝ զայն գոր թագաւորապէսն պատուէր՝ մանկաբար իւրատել՝ բանիւ եւ թղթով, անահ յամենեցուն ահարկուէն Լեւոնէ⁵¹. որ, որպէս ակնարկեցաք, առաւել առ երեսս գործէր, առ ՚ի շահել զհեռաւորսն եւս, կամ առ ՚ի միաբանել՝ եթէ հնար էր՝ զամբաստանողսն եւ զամբաստանեալն, քան թէ խտրէր եւ օտարանայր ՚ի Սրբոյն, գորոյ յարգ եւ վարկ՝ դարձեալ յետ սակաւուց յայտ արար՝ անմոռաց ունել ՚ի մտի եւ ՚ի

⁵⁰ «Եկաք (ի ժողովն), եւ գոր ինչ արարիք յայն ժողովն՝ համաձայնեցաք... (իսկ հակառակողքն) ոչ քննեցին եւ ոչ հաւատացին մեր արդար իրաւամբք զմանուկն նահանջելոյ, եւ ոչ չարակնելոյ իշխանութեանն, որում առընթեր էաք եւ տեղեակ... եւ անտես արարին զաստուածահաստատ Իշխողիդ գիր, եւ զուրբ ժողովոյ եպիսկոպոսացն որ ընդ քեզ, եւ զարժանաւոր եպիսկոպոսին հրեշտակութիւնն»:- Ո՞ւր արդէօք էր եպիսկոպոսն այն արժանաւոր:

⁵¹ Գրիչ վարուց Սրբոյն յամի 1190, անդստին յառաջին ամաց ծանօթութեան Լեւոնի ընդ Ներսիսի, ասէ. «Ի տօնս տէրունականս՝ առ իւր տանէր զհայրս մեր, եւ առ ՚ի սմանէ վարդապետական իւրատով եւ սրբոյ պատարագին նուիրագործութեամբ՝ միսիթարէր, հանդերձ բազմութեամբ ժողովոյն»: